

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարեկանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիտում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммаск“

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ.
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր ըստին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹՅՈՒՆ

Գերեզմանատների խնդիրը.—Ներքին տե-
սուծիւն. Նամակ Սիմֆէրոպոլից: Ներքին
լուրեր: Արտաքին տեսուծիւն: Թիւրքիա.
Նամակ Թիւրքիայից: Արտաքին լուրեր: «Մը-
շակի» հեռագիրներ: Յայտարարութիւններ:—
Տեղեկացոյց:—Բանասիրական: Մարդը գո-
յութեան կուր մէջ:

ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Կիրակի օր, հոկտեմբերի 29-ին
Թիֆլիսի առաջնորդարանի մէջ
հաւաքվեցաւ հայ հասարակու-
թեան նշանաւոր թէ աշխարհա-
կան և թէ հոգևորական անձինք-
ներից մի ժողով: Ժողովի նպա-
տակն էր քննել Թիֆլիսի Դու-
մայից առաջարկված խնդիրը գե-
րեզմանատները քաղաքի գծից տե-
ղափոխելու մասին:

Ժողովը նախագահում էր սրբ-
բազան առաջնորդը: Վիճաբա-
նութիւններից յետոյ ընտրվեցաւ
մի քանի հոգևորական և աշխար-
հական անձինքներից քաղկացած
մի մասնաժողով, որ պէտք է քննի
Դումայի առաջարկութիւնը և
գեկուցում ներկայացնէ առաջնոր-
դին, իսկ նա իր կողմից կը հա-
ղորդի այդ տուած կարծիքը, կամ
խնդիրը Դումային:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԻԸ ԳՈՅՈՒԹԵԱՆ ԿՈՒՒՒՄ ՄԷՋ *

«Գոյութեան կուրը յայտնվում է անհ-
րաժեշտաբար և այն աստիճան սաստկու-
թեամբ, որքան ձգտում են աճելու բոլոր
օրգանիզմները»

Դարվին

«Կեանքը, որ մի անգամ գոյութիւն սը-
տացաւ, պէտք է լինի պահպանված»

Լանգէ

Ա.

Գոյութեան կուրի ընդհանուր սկզբունքները:
—Աղբիւրները և հետեւանքները այս կուրի.—
Մի քանի մասնաւոր օրինակներ:

Բոլոր օրգանական (գործարանաւոր) էակների
մէջ—բոյսերի, թռչունների, անասունների և
մարդու մէջ—կայ մի տեսակ ընդդիմութիւն ինքն ա-
պահ պահպանութեան: Պահպանել կեանքը,
ընդդիմադրելով և պատերազմելով բազմատեսակ

*) Այս յօդուածը մենք կաղմբեցինք օգուտ քա-
ղելով պ. Ի. Մեչնիկովի աշխատութեանց
«Борьба за существование», որ տպվեցաւ
առաջին համադրի «Вестникъ Европы» 1878
թ. յուրիսի ամսաթիւի 9 և օգոստոսի համա-
րում եր. 438: Չանազան գիտնականների առն-
ված առանձին ցիտատների տեղը չը նշանակե-
ցինք, անյարմար համարելով մի լրագրական յո-
դուածի համար:

Մենք մեր կողմից պարտաւո-
րութիւն ենք համարում մեր կար-
ծիքը յայտնել թէ ի՞նչ պէտք է
լինի մասնաժողովի գործունէու-
թիւնը, ինչ պէտք է լինի նրա
պարապմունքների առարկան:

Ռուսաց ընդհանուր օրէնք կայ,
որ գերեզմանատները պէտք է գը-
տնվեն քաղաքի գծից դուրս:

Դիցուք այդ օրէնքը գործա-
գրվում է արդէն պետութեան մի
քանի քաղաքներում և դեռ ևս
չէ գործադրվում նոյն պետութեան
ուրիշ քաղաքներում: Դիցուք
Մոսկվայում բոլոր գերեզմանա-
տները քաղաքից դուրս են գտնվում,
իսկ Թիֆլիսում դեռ ևս տեղա-
փոխված չեն քաղաքի գծից: Տե-
րութիւնը յիշեցնում է քաղաքի
ներկայացուցիչ ժողովին, Դումա-
յին, որ օրէնքը չէ գործադրվում
և առաջարկում է վերջապէս գոր-
ծադրել նրան Թիֆլիսում: Դու-
ման վճռում է սկզբնական հարցը
և առաջարկում է բոլոր դաւա-
նութիւնների հոգևորական իշխա-
նութիւններին այդ մասին իրանց
կարծիքը յայտնելու, և եթէ հնա-
րաւոր են գտնում տեղափոխել
գերեզմանատները քաղաքից դուրս,

արտաքին ոչնչացնող ազդեցութիւնների դէմ,
որպիսի են՝ ցուրտը, տոթը, ջուրը և այլն.—
և մրցել իր նմանների հետ սնունդի, տեղի և այլ
կենսական պէտքերի համար—բոլոր այս քաղա-
ղեալ գործողութիւնները կոչվում են ընդհանուր
տեղմիտով զոյգութեան կուրի:

Գոյութեան կուրի մէջ ամեն մի օրգանական
էակ աշխատում է պահպանել ոչ իր անհատա-
կան անձնաւորութիւնը միայն, այլ և իր սեռը
կամ իր տեսակը: Մենք տեսնում ենք, թէ
որպէս բոյսերը, մի կողմից իրանք ապրելով,
միւս կողմից, իր ժամանակին սերմ են ձգում,
որ պահպանվի ապագայ սերունդը: Մենք տես-
նում ենք, թէ որպէս թռչունները և անասուն-
ները, մի կողմից իրանց գոյութիւնը պահպանե-
լով, միւս կողմից, հոգս են տանում ձագերի վրա,
որ չը սպառվի իրանց սեռը: Մարդը ընտելեան
այս կարգադրութիւնների մէջ բացառութիւն չէ
կազմում, նա նոյնպէս ենթարկվում է տեղեկեղբի
համալսարանական օրէնքներին:

Դրանից յառաջ է գալիս բոլոր օրգանական
մարմինների մէջ երկու տեսակ ձգողութիւն.
մէկը, որպէս ասեցինք, է բնական պէտք է
ինքն ապահպանութեան, իսկ միւսը
ձգողութիւն բազմապատկերման:

Առհասարակ ամեն մի ձգողութիւն, ինչ
տեսակ և լինէր նա, բնականաբար յարուցա-
նում է մրցութիւն: Օրգանական մարմին-
ների մէջ ինքն ապահպանութեան և
բազմապատկերման ձգողութիւնն ունի յառա-
ջացում են մրցութիւն: Այդ մրցութիւնը կոչ-
վում է «զոյգութեան կուրի»: Ուրեմն
գոյութեան կուրը է բնական ձգողութիւն օրգա-
նիզմների մէջ՝ պահպանելու համար իրանց
կեանքը մի կողմից և իրանց սեռը միւս կողմից:

ամեն միջոցներ որոնեն և գտնեն
այդ գործը գլուխ բերելու և այդ-
պիսով Դումայի վճռի իրագոր-
ծումն էլ հեշտացնելու:

Այդպիսով Դումայի վճիռը
յայտնվում է որպէս բոլորովին
օրինաւոր, ընդհանուր և հաստատ
օրէնքի յօդուածի վրա հիմնված:
Փոխել այդ վճիռը, բողոքել նրա
դէմ անկարելի է, որովհետեւ նա
օրինաւոր է և հաստատ օրէնքի
վրա է հիմնված, որովհետեւ նոյն
իսկ օրէնքի յօդուածը անկարելի
է փոխել: Բայց եթէ այդ օրէնքի
գործադրութեան համար դժուա-
րութիւններ պատահեն, եթէ հա-
սարակութիւնը գտնի թէ դեռ
ևս տարաժամ է գործ դնել այդ
օրէնքը, նա ինչպէս նոյն ինքն օ-
րէնքը թող է տալի, կարող է
կառավարութեանը մի խնդրագիր
ներկայացնել, խոնարհաբար խըն-
դրելով դարձեալ մի քանի տա-
րով յետաձգել օրէնքի գործա-
դրութիւնը, աչքի առջև ունենալով,
որ հայոց գերեզմանատները դեռ
այնպէս լցված չեն գերեզմաննե-
րով, ինչպէս միւսները, կամ ի
նկատի առնելով ժողովրդի այս
կամ այն աւանդութիւնը և սովո-

րութիւնը, ծուխերի աղքատու-
թիւնը որ արգելք է լինում նրա-
յնեղաները քաղաքից դուրս շատ
հեռու տանելու համար օրինաւոր
հաղորդակցութեան միջոցներ կազ-
մելու, և այլն... Վերջապէս տե-
ղական հանգամանքները աչքի ա-
ռաջն ունենալով հասարակութիւնը
կարող է խնդրել կառավարու-
թիւնը յետաձգել օրէնքի գործա-
դրութիւնը դարձեալ մի քանի
տարով:

Ահա, մեր կարծիքով, ինչ
պէտք է լինի ընտրված մասնա-
ժողովի պարապմունքների առար-
կան: Ընտելի և ապարդիւն աշ-
խատանք կը լինէր եթէ մասնա-
ժողովը սկսէր քննել սկզբն ա-
կան (պրինցիպիէլ) հարցը, ար-
դեօք պէտք է տեղափոխել գերեզ-
մանատները քաղաքից դուրս, թէ
ոչ, որովհետեւ այդ բանը պա-
տուիրում է պետական օրէնքը:
Մասնաժողովը կարող է քննել
միայն միջոցները, աչքի առաջն
ունենալ տեղական հանգամանք-
ները: Եւ վճռել որ չափով հնարա-
ւոր է այս բոլորից գործադրել
Թիֆլիսում գերեզմանատների վե-
րաբերութեամբ ընդհանուր օրէն-

ների մէջ կայ մի առանձին դաս, որոնք կոչ-
վում են «ընտելութիւն», դրանք յատկապէս ծա-
ռայում են կուրելու համար, բայց կուրում են
ուրիշ միջանոցի հասարակութեան հետ: Մե-
ղուները նոյնպէս սպանում են այն մեղուին, որ
ուրիշ ընկերութեան է պատկանում և պատա-
հաբար ընկել էր իրանց հասարակութեան մէջ
և կամ խեղդում են իրանց միջից վատ ու ան-
գործունեայ անդամին:

Առհասարակ խօսելով, բնութեան մէջ յայտն-
վում են աւելի շատ պահանջներ, քան թէ մի-
ջոցներ նրանց բուսականութիւն տալու համար:
Բոլոր օրգանական մարմինները գործում են այդ
միջոցներին հասնելու նպատակով: Այստեղից
յառաջ է գալիս կուրը, կամ, ընդհանուր տեր-
մինով ասելով, մրցութիւնը: Մրցութեան
առարկան ստանում է մրցող կողմերից, ի հար-
կէ, մէկը՝ Այսպէս յայտնվում են յաղթող և
նեղ և յաղթված ներ:

Գոյութեան կուրի մէջ որոշել, թէ որոնց
կողմը կը մնայ առհասարակ յաղթութիւնը,
դժուար է. միայն այսքանը նոյնպէս յայտնի է,
որ յաղթող լինում են այն օրգանիզմները, որոնք
աւելի ընդունակութիւններ ունեն, որոնք աւե-
լի զարգացած և կատարելագործված են, և ո-
րոնք աւելի բարեխաղաղ պայմանների մէջ են
գրված, Զարգացման ներգործութիւնը, որպէս
գոյութեան կուրի մէջ, նոյնպէս և ինքնապաշտ-
տանութեան վերաբերութեամբ, երևում է մի-
ջն անգամ բոյսերի և անասունների մէջ: Վայ-
րենի անասունները և վայրենի բոյսերը համե-
մատաբար աւելի միատեսակ են և համեմատա-
բար սակաւ են աճում, քան նոյն տեսակներին
համապատասխանող ընտանիները, որոնք քա-
ղաքակրթված վիճակի մէջ են ապրում, թէև

յուզվեցան, երբ ռուսաց հաւատարմութեան ներքո նրանց յիշեցրին Բերլինի դաշնագրի 23-դ յօդուածը, որի համեմատ մասնաժողովի նիստերին պէտք է բազմաթիւ ել մասնակցէին: Բոլորեալի բազմութեան բողոքեցին այդպիսի վարմունքի դէմ: Նոքա հասկացան թէ ինչ նշանակութիւն ունէր նրանց հեռացնել մասնաժողովից:

Բոլորեալի բազմութեան պատգամաւորները, որոնք բողոքեցին այդ անձրութեան դէմ, բոլոր գեղարարներէ լաւ ընդունվեցան, բացի մէկից, որ նրանց բողոքովն չընդունեց, զանազան անտեղի պատճառներ բերելով:

Մակեդոնիայի բազմութեան նոյնպէս պատգամաւորներն են մի բողոքագիր, որի մէջ նոքա պատմում են իրանց տարաբարութիւնները և բողոքում են Բերլինի դաշնագրի դէմ: Եթէ Մակեդոնիայի հիւպատոսների զեկուցումները հրատարակվէին, նոքա կը հաստատէին բազմութեան պատմածների ճշմարտութիւնը և ցոյց կը տային թէ այդ ողորմելիները որքան տանջանքների են ենթարկվել:

Մակեդոնիայի բազմութեանը գէնք վերցրին և Սերեսում սկսվեց արիւնհեղութիւն: Բ. Դուռը իսկոյն ապստամբութեան տեղը ուղարկեց հինգ թէ վեց բատալիոն՝ զօրքեր և անկասկած հեշտութեամբ կը ձնչնապատմբ բռնութիւնը, եթէ Սերեսի բազմութեանը չը պաշտպանէ: Զր պէտք է մոռանալ, որ Հերցեգովինայի, Բոսնիայի և Բոլքարիայի ապստամբութիւններն էլ այդպէս սկսվեցան: Սերեսում երևեցած կայծից կարող է հրդեհ գոյանալ, որ արագութեամբ կը տարածվի վատ կառավարված ամբողջ երկրի մէջ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻՒՄՈՒՅԻՑ

Կ. Պոլսի, 19 հոկտ.

Տեղւոյս մամուլն ծանոյց թէ ասիական բարեկարգութեանց համար Լէյպպիցի ներկայացուցած ծրագիրն Գոտեն ընդունած է փոփոխութիւններ ընելով: Մի հայ թերթ գիտել կուտայ թէ այդ բարեկարգութիւնների դրամական խնդրոց հետ սերտ վերաբերութիւն ունենին թիւրք կառավարութիւնը յայտնած էր, արդ այժմ ինչպէս պիտի ըլլայ կը հարցնէ: Բայց կառավարութիւնը մի յանձնաժողով ընտրեց որ երկրին անտեսա-

Անհատական թերութիւնները երևում են ոչ միայն մարդու արտաքին կերպարանքի նշանների մէջ, այլ և նրա ներքին գործարանների մէջ: Ուղեղի կազմութեանը և նրա զարգացման աստիճանը զանազան ցեղերի մօտ, գիտութեան մէջ ապացուցված բան է: Նշանները, որ աւելի թափանցած են մարդու կազմութեանը խորութեան մէջ, ենթագործ են աւելի ևս հաւանականութիւն մարդկանց միմեանց վրա ունեցած անհատական առաւելութիւնների կամ նրանց գերազանցութեան մասին: Այստեղից յառաջ են դալիս մարդերի բնական տարբերութիւնները, որ մեծ ազդեցութիւն են անում մրցութեան գործի մէջ:

Տարբերութիւնները մարդկային մեծ խումբերի մէջ, այսինքն ժողովուրդների և ցեղերի մէջ, այնքան խոշոր և անխել են, որ մենք մինչև անգամ աւելորդ ենք համարում այստեղ երկար խօսել այդ մասին: Իսկ իր թռչնութեան ազդեցութիւնը մարդու անհատական առաւելութիւնները զօրացնելու և նրա ընդունակութիւնները կատարելագործելու մէջ—նոյնպէս անբերքալիւն է, որպէս ընտանի անասունների մէջ: Այդ ազդեցութիւնը յառաջացում է նոյն իսկ երեւոյթները, որ մեր առաջին զլխում ցոյց տուեցինք վայրենի անասունների համեմատական միակերպութեան մասին նոյն ցեղին համապատասխանող ընտանի անասունների հետ: Կուլտուրան մի և նոյն ներգործութիւնն ունի, որպէս ընտանի անասունների և բոյսերի վերաբերութեամբ, նոյնպէս և մարդու վերաբերութեամբ: Գնահատականութիւնը միայն դրանց ընդունակութեան չափի մէջն է, թէ որն որքան կարող է չափել նրանից: Համեմատեցնել ընտանի ձիերի և ոչխարների տեսակները նոյն

կան վիճակը քննել, գնահատել դրութիւնը բարեբեւութեան միջոցներն խորհի և այդ խորհած միջոցներին կառավարութեան ներկայացնելով գործարարութիւն լինի, միայն ուս պայմանաւ որ «տեղութեան շահույթը և շահութեան իրաւաստութեանց վնասը չը լինի»: Այս պայմանը բաւական է այդ յանձնաժողովին բան լը չը սպասելու համար: արդէն յանձնաժողովը այնպիսի անձերէ կազմեալ է որ կամ օտարական լինելով երբեք գաւառներուն վրա տեղեկութիւն չունեն կամ տեղացի են, բայց ամենին անտեսական գործերէ տեղեկութիւն չունեն: Սակայն իրաւամբ կը կարծուի թէ կառավարութիւնը, բարեկարգութիւն և գնահատելու բարեբեւութիւնը կը յուսայ թերեւս փոխառութիւն մը ընել: Այնուհետև ոչ բարեկարգութիւնն ոչ գնահատելու բարեբեւութիւնը կը մնայ: Բարեկարգութեանց ծրագիրն տակաւին չը հրատարակուեցաւ:

Հարստահարութեանց տեղեկագիրներն և լուրերն չարունակ կը հասնին: Սերեսոյի Բաթիւրին անուն հայ գիւղն կը դիմեն բազմաթիւ չէքէզներ և ամեն կերպով ուտել խմել և հայ ժողովուրդը տառապելէ վերջ բազում ոսկի կը պահանջեն, խեղճ հայերը չունեն որ տան, չէքէզներն գիւղի տէրէտէրն և մի քանի երեւելիներ հետեւին առնելով կը մեկնին: Խեղճ գիւղացիներն կը բողոքեն, բայց պատասխան չը կայ:

Սերեսոյի հայոց առաւելանքներն ալ սահմանը անցան: Ամսոյս 15-ին կիրակէ օր սերեսոյց խուռն բազմութիւն մը Գոտեն մեծ վիզի Սալֆեթ-Փաշայի դիմեցին և բողոքագիր մը մատուցին իրենց կրած հարստահարութեանց համար: Մեծ վիզիը շատ ցաւ յայտնեց և և խոստացել է անմիջական դարմաններ ընել: Եւ ահաւաստել երկուշաբթի օրն Պոլսոյ թերթերն հետեւեալ լուրն կը հրատարակեն. «կառավարութիւնը որոշեց Պոլսի եղող ամենամատակարար տեսակէ չորս աւազակներ, մին առնալով, մին յոյն, երկուքն տաճիկ իրկել մէկը Պաղդադ և միւսներն Տիգրանակերտ ու Սերասոյի, Պոլսոյ ժողովուրդին հանգստութեանը համար»: Ինչ կըռքէ այս որոշման, մեկնութեան հարկ չը կայ: Եթէ ուրիշ գաւառի հայեր կուզեն թող սերասոյցոց օրինակին հետեւն և խուռն բազմութեամբ ցոյցեր ընեն և բողոքներ տան, Պոլսոյ մէջ ամենամատակարար տեսակէն աւազակներ չեն պակսեր զոր կառավարութիւնը պիտի փութայ իրենց հիւր խրկել: Թիւրք կառավարութիւնը այսպիսի գործնական պատասխաններ տալու մասին շատ ճարպիկ է:

Ամսոյս 15-ին պատրիարքարանը ընդունեցաւ Սերասոյից երկու ընդարձակ տեղեկագիրներ, ստորագրեալ Առաջնորդէն ու կրօնական եւ քաղաքական ժողովներէն: Սոյն տեղեկագիրներն մանրամասնօրէն կը պարունակեն վերջին հինգ տարիներն Սերասոյի մէջ գործուած հարստահա-

ցեղերին պատկանող վայրենիքներէ հետ, և դուք կը տեսնէք, որ վերջինները մնացել են բոլորովին միակերպութեան մէջ: Համեմատեցնել ընտանի բոյսերի և տունկերի տեսակները իրանց ցեղերին համապատասխանող վայրենիքների հետ, դարձեալ նոյն երեւոյթը կը տեսնէք: Կրթութիւնը մի և նոյն ազդեցութիւնն է անում և մարդու վրա: Մարդը իր նախնական վիճակի մէջ, վայրենի դրութեան մէջ, պահպանում է անփոփոխ միակերպութիւն: Իսկ կրթութիւնը մարդիկներին մէջ առաջացնում է բազմաթիւ անհատական տարբերութիւններ, այսինքն զանազանութիւններ, որպէս անձերի մտաւոր կարողութեան մէջ, նոյնպէս և նրանց կենսական պահանջներին մէջ: Եւ այս պահանջների համեմատ երևան են գալիս մրցութեան երեւոյթները թէ անհատների և թէ ժողովուրդների մէջ, նոյն չափով, ինչ չափով անհրաժեշտ են պահանջները:

Վերոյիշեալ նկատողութիւնները կարող են մեզ ծառայել պարզելու համար մի շատ նշանաւոր հարց՝ բնական անհատականութեան մասին, որ մեծ դեր է խաղում տնտեսական կեանքի մէջ: Վաղուց գիտնականների մէջ վիճաբանութեան առարկայ է դարձել մարդու անհատական անհատականութիւնը: Ոմանք դրա պատճառները դնում են միմիայն բնութեան մէջ, պնդելով, թէ բնութեան է անում բոլոր էակների անհատական: Իսկ ոմանք վերաբերում են այդ միայն արտաքին ազդեցութիւններին, որոնց մէջ մեծ դեր է խաղում կրթութիւնը: Թէ առաջին և թէ վերջին կարծիքը ունեն իրանց նշանակութիւնը ոչ միայն մարդու վերաբերութեամբ, այլ բոլոր օրգանական կենդանի մասին: Այնպէս որ, բնական անհա-

րութեանց պատմութիւններն, նշանակելով հարստահարութեանց ենթակայ եղող գիւղերուն անուններն, թուականով եւ օրով հանդերձ, կը թուի թէ սոյն տեղեկագիրներն շարունակուին պիտի, Ազգային թերթերն կը յորդորեն պատրիարքարանը դասուց դեսպանաց ներկայացնել: Մեք կը փափագեմք որ ամեն գաւառներէ գան այսպիսի տետրակներ և պատրիարքը ազգային ժողովոյ ալ ներկայացնէ: Ներկայեալ կը խրկեմ խիզախ Հայոց պատրիարքարան տուած հանրագրութեան օրինակն:

Կառավարութիւնը և ոչ մէկ հարստահարութեան լուրն կարող եղած է սուտ հանել տալ: Մեք կարող չենք ըմբռնել, մեկնել թէ ինչպէս էլ միմեանք անտարբեր կը կենայ հայոց այս տառապաղտ վիճակին առաջ, ինչպէս հնար է ինքզինքնին ազգին եւ եկեղեցւոյ նուիրած անձանց (ինչպէս իրենք կը լսեն), հովանաւ վայրերն երթալ զուարճանալ երբ ժողովուրդին արիւնը ամէն օր կը վազի:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Բէյութի ընկերութեանը» Աթէնքից հաղորդում են, հոկտեմբերի 25-ից, որ Թէսալիայում և Էպիրոսում գրութիւնը շատ անհանգիստ կերպարանք է ստանում: Ատում են, որ եթէ Թիւրքիան կամ մեծ պետութիւնների ճնշման տակ, կամ մի այլ պատճառով կողմնայ բաւականութեան տալ Գուհաստանին, Ալբանիան միութեանը, որ իր ձեռքի տակ ունի 100,000 զինուորներ, վճռեց ընդդիմադրել այդ դիտաւորութեանը մինչև վերջին կաթիլ արիւնի:

—Բեկդաղից գրում են «Բէյութի ընկերութեանը» որ պաշտօնական չըջաններում լուր կայ, որ սերբիական զօրքը խաղաղ դերք պէտք է ընդունի:

—Նոյն տեղից գրում են որ իշխան Միւսան հրամայել է ռուսաց լեզուի մի ամբիօն հիմնել Բէյլորաղի համալսարանում:

—«Wiener-Zeit.» լրագրում տպված է աւստրիական կայսրի հրամանը, որով դեկտացիաները կանչվում են 7-ին նոյեմբերի:

—Աւստրիական կառավարութիւնը Հերցէր-տին իր ներկայացուցիչ է նշանակել Բէյլորաղում:

—«Մասիս» լրագրում կարդում ենք հետեւեալը: «Երբ թէ Ռուսոյ կառավարութիւնը ծանուցեց է Բ. Գրան թէ այսուհետև վանայ, Տիւրքիայի, Մուսուլի և Գոնեայի մէջ ալ հիւպատոսներ պիտի դնէ»:

Լասարութիւնը առանձին անձնաւորութիւնների մէջ, կամ տոհմերի ու ցեղերի մէջ է ընդհանուր գաղափար, որ տարածվում է ամբողջ կազմակերպեալ մարդկութեան վրա: Այդ անհատականութիւնը կարող է, ի հարկէ, ենթարկվել զանազան ազդեցութիւնների, և այդ պատճառով տատանվել կամ այս և կամ այն կողմը: Մենք արդէն տեսանք, թէ որպէս կրթութիւնը կարող է զօրացնել մարդու բնական յատկութիւնները, և առհասարակ առաջ բերել մեծ տարբերութիւն մի և նոյն ժողովուրդի անդամների մէջ, բայց դարձեալ նրանց հիմքի մէջ դրած կը լինի սկզբնական-բնական անհատականութիւնը:

Անհատականութեան այդ զանազան ուժերը (նախ, սկզբնական-բնական անհատականութիւնը, երկրորդ, կրթութեանց ազդեցութիւնից յառաջ եկած անհատականութիւնը) շատ անգամ մրցող կողմերի մէջ խիստ հազիւ միանում են, և դրա համար պատճառում են համաձայնութեան անկարելութիւն: Այդ հարցին դիպանք մենք այն նպատակով, որ ցոյց տանք, թէ բնական անհատականութիւնը անհատների և նրանց խումբերի մէջ,—այսինքն ցեղերի, ազգերի և ժողովուրդների մէջ,—առհասարակ յատուկ է մարդկային սեռին: Իսկ կրթութեան անհատականութիւնը հետեւանք է զարգացման ուսման միջոցով: Ուրեմն թէ առանձին անհատների, թէ ցեղերի և թէ ազգերի մէջ, տիրող անհատականութեան պատճառով, մրցութիւնը չէ կարող հաւասարակշռութեան մէջ պահպանվել, անպատճառ կողմերից մէկը պէտք է ընկնի, ընդհանուր օրէնքի համեմատ յառաջ կը գան յաղթողներ և յաղթուածներ:

Այժմ ինքն ըստ ինքեան բարձրանում է մի հարց, չէ կարելի արդեօք գտնել որ և ինչ ընդ-

—«Մասիս» մէջ կարդում ենք: «Լոնդոնից քաջուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Բ. Գոտեն աւարառութիւն ու մարդասպանութիւն ընող քիւրդին ի մահ դատապարտելու արտօնութիւն տուեր է Կարնոյ մէջ կազմած դատական յանձնաժողովին»:

—«Ճէրիտի» Հալաթի» Կ. Պոլսի լրագրից հաղորդում է որ Սուլթանի նախագահութեամբ այս օրերս մինիստրների խորհուրդ կայացաւ Այդ խորհրդի մէջ լրագրի խօսքին նայելով, Ա. Գոտին գաւառների համար Անգլիայի առաջարկած բարենորոգմանց ծրագիրը քննի մի փոփոխութիւններով ընդունվել է:

ՄԵՏԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

ԲԵՐԼԻՆ, 27 հոկտեմբերի (8 նոյեմբերի): Այստեղ կալանաւորված են հինգ ռուսներ, որոնք բացի Ռուսաստանի հետ անդադար նամակագրութիւն անելուց մօտ յարաբերութիւններ ունեն պայտեղ սօցիալիստների առաջնորդների հետ: Կալանաւորվածներից երեքը բժիշկներն են, մէկը աստուածաբան և մէկն է արհեստագործների ակադեմիայի ուսանող: Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԻ, 28 հոկտեմբերի: Պետական բանկի 5% տոմսերը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 95 ռ. 37 կ., երրորդ 95 ռ. 50 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսեր արժէ 233 ռ. 50 կ., երկրորդ 228 ռ. 50 կ., արեւելեան 92 ռ., ոսկի 8 ռ. 47 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 23, 28 պէնս, ռուսաց 100 ռուբլ Դերմանիայի վրա արժէ 199, 25 մարկ, Փարիզի վրա 214 Ֆրանկ 75 սանտիմ: Տրամադրութիւնը ամառ է: Ամբիւրայի կերօսիւնը պուրը 2 ռ. 50 կ.:

ՎԻԵՆԱ, 28 հոկտեմբերի (9 նոյեմբերի): «Polit Correspond.» լրագիրը հերքում է անգլիական լրագիրներից հաղորդած այն լուրը, իբր թէ Աւստրիայի և Անգլիայի մէջ համաձայնութիւն է կայացել ռուսաց զօրքերի թիւրքաց սահմաններից դուրս գալու մասին:

ՊԵՏԵՐ, 28 հոկտեմբերի (9 նոյեմբերի): Լուր կայ որ Ֆրանց Յոլափի կայսրը ընդհանուր ներուժի հրատարակեց աւստրիացիների դրամած երկիրների սահմաններում: Այս առիթով մէկ պրօկլամացիալը հրատարակել տեղական բնակիչներին ուղղված:

հանուր նշաններ, որոնցով կարելի լինէր որոշել յաղթողներին յաղթուածներից, և այդ հիման վրա, առաջին հաջորդականի մրցութեան վախճանը: Բնագէտները, որ նայում են այդ հարցի վրա իդէալական կէտից, պնդում են, թէ յաղթողներ կարող են լինել առաւել նրանք, որ ունեն աւելի բարձր և քաղաքական գերազանցութիւններ, և որոնց գործունէութիւնը արդարութեան ու ճշմարտի վրա է հիմնված և այն իսկ վատերը, անբարոյականները պէտք է ընկնեն, պէտք է յաղթվեն: «Աւելի բարոյական ժողովուրդները—ասում է մի գիտնական—են մի և նոյն ժամանակ աւելի զօրաւորները»:

Հեղտ է հասկանալ, թէ որպէս հարեանցի մտածութեան ճանապարհով կարելի է հասնել այսպիսի եզրակացութիւնների. բայց աւարկայի հետ լաւ ծանօթանալու համար անհրաժեշտ է և ընտանական ստուգութիւնը: Շատ զըրողներ—ասաց Մակկիալիլի—նկարագրեցին պետութիւններ, հասարակութիւններ այնպիսի կերպարանքով, որը նրանք երբեք չը կարողացան տեսնել իրականութեան մէջ: Ինչ բանի ծառայեցին այսպիսի նկարագրութիւնները: Թէ որպէս ապրում են մարդիկ, կամ որպէս պէտք է ապրին,—այդ երկու մտքերի մէջ ահագին հեռաւորութիւն կայ:—Ուրեմն բարոյականութեան սկզբունքը, թէ և շատ ցանկալի, բայց մի տկար դէպք է գոյութեան կուրի մէջ: Փորձենք դառնալ դէպի այն հետեւանքները, որ յառաջ է բերում կենդանի բնութիւնը իրական աշխարհի մէջ, և այնտեղից հաւաքենք տեղեկութիւններ, որպէս զի կարողանանք գտնել փոփոխութեան սկզբնական մրցութեան վերաբերեալ հարցերը մարդիկների գոյութեան կուրի մէջ:

(Կը շարունակվի)

